19. ՏԸՌԱԼ ԱԽԲԵՐՆ

Կէղնի չէղնի էրկու ախբեր կէղնի։ Մեծ ախբերն տըռալ կէղ-նի, մեկել՝ աշխատող։ Հ՚ըմնօր աշխատող ախբերն կէրթա կաշխա-տի կը բերե տռալ ախբոր կը կերցու։

Հ՚ըմնօր կաշխատի։ կբերե էդ տղեն կուտե։

Օր մը լե կըսե.— Ա՛խբեր, հ՚ըմնօր ես կաշխատիմ կըբերիմ յու կուտիս, հ՚էսօր լե դու գնա աշխատի, բի, ես ուտիմ։

Էդ տըռալ ախբեր կըսե.— Ջուր մի աստված ընծի էրազ չի գա, ըսե. «Հ՚ելի՛ գնա աշխատի», ես չըմ էրթա։

Կտրիճ ախբերն կըսե.— Օր դու չըս էրթա, ես լե իմ դատում քըզիկ չըմ իտա, ես մինակ կուտիմ։

Քենիմ օր էդ տըռալ ախբեր կը մնա անոթի։ Օրըմ լե հ՚իրկուն կը քըրպոտի, քնի։ Գիշեր աստված էրազ գիգա, կըսե.

— Հ՚ելի գնա թագավորի մոտ, թագավոր կօգնե քըզի։

Կելի, լուսումթին շուտ կէրթա թագավորի մոտ։ Կը ղարկե դարկեահրն, վազիրն գիգա դուռ կը բանա։

Կըսե.— Ի՞նչ կա։

Կըսե.— Սաղութեն, թագավորի հետ գործ ունիմ։ Թող փշում էրթամ վերին դին տեսնամ ու դառնամ հ՚իգամ էրթամ։

Վազիր կը թողե։

Կելնի կէրթա, կը բանա զգլուխն ու կանի թագավորի հ՚առեշ։

Թագավոր վեր կը վերցու գլուխն, կիշքե տեսնա օր՝ տղե մի կանուկ է ուր հ՚առշև։

Կըսե.— Էհ՚, հողածի՛ն, ի՞նչ կա, հ՚որի՞ն իս էկի կանի։

Կըսե.— Թագավոր ապրած, քենե պահիմ, աստծուց ի՞նչ պա-

հիմ, ընծի հանդ ու թախթ չկա օր աշխատիմ, էկիր իմ օր քանի մը փարա իտաս, էրթամ ապրուստ էնիմ։

Թադավոր կաչքա տղի քիթ ու մռութ կարմիր, բիլակներ մեկ-մեկ դոմշու բիլակ, հ'ընկնավոր տղեմ կանուկ հ'առեշ։

Կըսե.— Տղա՛, դու հըմլա կտրիճ, հ'որի՞ չըս էրթա աշխատի։

Կըսե.— Թադավոր ապրած, օղորդ օր, ձեռք ու օտքս տեղն է, հիվանդ իմ, չըմ կըռնա աշխատի, քիսպըթիս մ'իշքի, ներսս ցավ կա։

Թադավոր կավդընա տղին՝ կիտա քանիմ հարիր օսկի, ճամբու կը դնե։

Տղեն կելնի դուռ, կը մտածե, կըսե. «Էդա քանի մը հարիր օսկին տանիմ, իմ ախբեր հ'իսնե աշխատող է, կառնե իմ ձեռքեն՝ էլ չըմ կըռնա աշխատի, էդոր աղեկ առնիմ էրթամ դիով մը, նըստիմ ուտեմ, տեսնաք աստված ի՞նչ դուռ կը բանա»։

Էդ հըմալ կըսե, կը չափե, կտրե, կը տեսնա ու մտածուկ հաշվու դիդա, կելնի կհ'ընկնի ճամբախ ու կէրթա։

Կէրթա, շատ ու քիչ կէրթա, կէրթա, հ'աղբրիմ կը հանդիպի, կը նստի հ'աղբրի վրեն, կը տեսնա օր պառավըմ դիդա կուժ կլեցնե։

Կըսե.— Ա՜յ օրդի՜, դու ինչի՞ ես նստե էդտեղ։

Կըսե.—Նա՛նե, ճամբորդ իմ, էկա կընցնեք, տեսա հ'աղբուր հ'իտա տեղ, նստա հանգստենք, շուր մի խմենք ու հ'ելնենք թորկենք էրթենք։

Կըսե.— Օրդի՛, դու դո՞ր կէրթաս։

Կըսե.— Նա՜նե, վոլլահի, ես լե չըմ դինա դո՛ր կէրթամ, կորցուցեր եմ դիմ խելք ու հ'ընկեր իմ ճամբախ։

Կըսե.— Արի էրթանք մըր տուն, քանիմ՝ օր մանցի ու հ'ընցի գնա։

Տղեն կըսե.— Դու օր կըսիս, ըռըղխ էղեր է, ես լե դիգամ։

Կհ'ելնի կհ'ընկնի պառվու հ'ետևեն, պառավ լե կըհ'ըլնա կուժ, կը դնե թևի վրեն ու կէրթան։

Կէրթան պառվու տուն, կը նստին, պառավ հաց կը բերե դնե, կուտին, կը պրծնին։

Պառվուն լե մեկ ախճիկ կէղնի։

Քանիմ օր տղեն կմնա էդ տեղ։ Օրըմ լե դուզե օր հ'ելի էրթա։

Կհ'ելի կէրթա, կհանե օսկիմ օր տա պառվուն, պառավ օր օսկիք կը տեսնա՝ խուտում կը կոտրի։

Կըսե.— Օրդի՛, դո՞ր կէրթաս, հ'էսօր լե նստի, մանցի, վաղ հ'ելի դնա։

Տղեն պառվու խոսք չկոտրե՝ հ՚ըն օր լե կը մնա պառվու տուն։

Կհ՚ելնի մեկել օր, կուզե էրթա, կը հանե էրկու օսկի կիտա պառվուն։ Պառավ էրկու օսկին օր կը տեսնա, կըսե.

— Օրդի՛, հ՚ըսօր լե մանցի, լուսուն կը թորկիմ քըզի հ՚ելի գնա։

Տղեն հ՚ըն օր լե կը մնա։

Հ՚իրկվան թարաֆ կէղնի. կովեր գիգան, կը կթե, թավլեն կավլե, թրիք կը թափե, կէրթա ջուր կը բերե պառավ։ Գիգա հաց կը դնե, կընստին կուտին։ Հաց կուտին կը խըլըսին, պառավ տղին կըսե.

— Օրդի՛, դու էկեր իս, քու էրթացած ճամբախ լե չըս դինա. էն օր գու էկեր իս իմ տուն մսաֆըր էղերիս, էղերիս տան տղի տեսակ. արի, իմ ախճիկ իտամ քզիկ, դու էղի ընծիկ վեսա, էն թըղ էղնի քզիկ կնիկ, ապրինք հ՚իրարու հետ, տեսնանք աստված ի՞նչ դուռ կը բանա։

Տղեն պառվու խոսքին անկաճ կէնե, կհ՚ելնի պառվու ախճիկ կառնի։

Յոթն օր յոթ գիշեր գոլ ու զուռնա կը զարկին, հարսնիք կը խաղան, ուրանց քեֆ, ուրախութեն կէնին։

Տղեն ու ուր կնիկ թըղ մնան հոդ, մենք դառնանք տղի ախբոր վրեն։

Էդ տըռալ տղի դատկան ախբերն է, թե էրկու, թե իրեք ամիս կաչքե օր ախբեր հա՛ հ՚իգա, չի գա, ինքն ուրեն կըսե. «Իմ ախբեր իմա՞լ էղավ, կէղնի՞ տեղ մի գնաց հ՚ընկավ մեռավ, յան լե չէ՝ գարկին սպանին»։

Իրեք չորս օր կը մտածե, օր մը լե կըսե. «Կանի հելնիմ էրթամ հ՚ընկնիմ էդա մըր գեղի մեջ, զարկիմ, զարկվիմ, հըլա հարցում տեսնամ մեկ իմ ախբոր սալըղ չը կըռնա՞ էնի»։

Կել օր կէրթա կհ՚ընկնի գեղի մեջ, էն տնեն է՛ն տուն, է՛ն տնեն էն տուն, կը հարցու փորձե, մեկ սալըխ չի տա։

Ըդոնց գեղ քաղքին մոտիկ կէղնի։

Էդ քաղքի տուն լե Վելի կէղնի, Վելի քաղաք կըսին։ Կըսե. «Կանի օրըմ լե հելիմ էրթամ Վելի քաղքի թագավորից հարցում, տեսնամ, իմ ախբոր սալըխ չը կըռնա՞ իտա»։

Կելնի, կէրթա թագավորի դուռ կը զարկե։

Վազիր գիգա, կը բանա, կըսե.— Ի՞նչ է։

Կըսե.— Թագավորին էրկու խոսք պիտի ըսիմ։

Վայիր էլ բան չըսե, կըթորկե մարդ, կհ'ելնի վեր, կէրթա թագավորի մոտ, գլուխ կը բանա ու բարև կը բռնե կայնի։

Թագավոր կըսե.— Է՜յ, հողածի՜ն, ի՞նչ կա։

Կըսե.— Թագավոր ապրած կենա, ես մեկ տըռալ ախբերմ ունեք, ուր ձեռքեն աշխատանք չիդեր, իդա էրկու իրեք ամիս կա՝ կորեր է, էկեր իմ քենե սալըխ մի էնիմ, տեսնամ խաբարըմ չը-կը՞ռնաս իտաս։

Թագավորն էդ օր կը լսե, քիչ մի կը մտածե, կըսե.— Ի՞նչ ուղա է։

Մարդն կըսե.— Տըռալ տղեմ է։

— Վո՜ւյը, էն տղեն է, հան նոր հ'ընկավ միտքս։ Էրկու իրեք ամիս հ'առեջ արռալ տղեմ էկավ իդա տեղ, ըսեց. «Ես հիվանդ իմ, չըմ կրռնա աշխատի, իմ ախբեր էրեր է դիս տնեն դուրս»։ Քանիմ հարիր օսկի տվի ուրին՝ դնաց։

Տղեն էդ օր կլսե, կըսե.— Ըպա, թագավոր ապրած, չդիցար ի՞նչ ճամբով գնաց։

Կըսե.— Չէ, ես ի՞նչ գինամ, ի՞նչ ճամբով գնաց, ես տվի փա-յենն, առավ ու հ'ելավ գնաց։

Տղեն թամանա կէղնի։ Կելնի թագավորի դիվնեն, կը բռնե ճամբախ ու կէրթա։ Կէրթա, կէրթա շատ կէրթա, քիչ կէրթա, կէր-թա ռաստ գիդա ախբոր նստած հ'ախբրին, հ'իրկվանդին կէղնի, կը նեղենա, կը նստի հ'ախբրի վրեն օր հանդստանա։ Կը հանգստա-նա, չուր հաց կուտե, կը տեսնա օր պառավ մի կուժ վըր թևին էկավ։ Էկավ հ'ախբուր, լըցեց ուր կըժեր, կը դառներ, տղին տե-սավ։

Ըսեց.— Այ օրդի՛, ի՞նչ տեղացի ես։

Կըսե.— Նանե, Վելի քաղքի մոտ գեղըմ կեր, էն գեղեն իմ, ես ու ախբեր մ'ենք. իմ ախբեր տըռալ էր, չըր աշխատեր։ Օրըմ նեղեցա ուր վրեն, հերսոտավ հ'ելավ էկավ, աչքեցի չէկավ, հ'ելա հ'ընկա հ'ետևեն էկա, էդա հ'ախբրի վրեն նստա։

Պառավն էդ օր կը լսե, կելնի ուր կուժ կը վերցու, կը դնե թևիս օր էրթա։

Տղեն կըսե.— Տեխ մի չունի՞ս, քենիմ փարա տամ քըզի, հ'ի-գամ սրթըրվորիմ, հ'ելնիմ առավոտուն էրթամ։

Պառավն օր փարի անուն կը լսե, կըսե.

— Հա՜, օրդի՛, տեղ կա, քելե էրթանք քընի, սաբահտան հ'ե-լի ի՞նչ կիտաս տուր քու նանեին, թող գնա։

Կելնի հ'ընկի պառվու հ'ետևեն, կէրթա։

Պառավ կը տանի թավլի մսուր նշանց կիտա, աղեն կէրթա կը նստի մսուր, կը փաթե ուր ծկարեն ու կրակ կիտա հ'ինք։ Կը նստի դեն։

Հ'իրկուն կէղնի, պառվու փեսեն ղիգա, կը տեսնի օր հազի ձեն գիգա։

Կըսե.— Նանե, էդ ի՞նչ ձեն է։

Պառավն կըսե.— Մսաֆըր է։

Տղեն կըսե.— Կանչե թըղ հ'իգա։

Կէրթա տղին կըսե.— Արի՛, էրթանք հ'օդեն նստի։

Տղեն կելնի գիգա։

Գիգա, օր կտեսի ուր ախբեր, կելնի փաթվի ուր ախբոր վիզ, ու կըսե զոքընչին թե. «Էդի իմ ախբերն է»։

Նոր էրկու ախբեր էտ տեղ ուրանց գլխու գալածներ կը պատմին հ'իրարու։

Թաժա կբռնին հարսնիք։

Յոթ օր կը զարկին ու կը խաղան։

Էնգոնք կը հասնին ուրանց մուրազին, դուք լե հասնիք ձըր մուրազին։

Աստծուց իշավ իրեք խնձոր՝ մեկ ըսողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։